Մինչեւ մէկ - երկու տարեկան երեխան կարիքը ունի ծնողներին մնալուն գուրգուրանքին եւ հոգածութեան: Բայց անկէ ետք պէտք է ձգել, որ կարգ մը բաներ առանձին սորվի եւ յայտնաբերէ: Ասիկա չի նշանակեր, որ ծնողները պիտի դադարին ուղղութիւն տալէ, բայց չափազանցուած հոգածութիւնը մէկ կողմէ ձգելով՝ հետուէն պիտի հետեւին անոր:

Կարեւոր է, որ նախ եւ առաջ ծնողները ընդունին այն գաղափարը, թէ երեխան կրնայ սխալիլ եւ պիտի սխալի: Այսպէսով անոնք առիթը կու տան պատկերներ, որ պարզ է, յայտնաբերել, ինչու չէ, սխալի եւ իր սխալին նոր բան մը սորվի:

Շատ մը ծնողներու ցուցաբերած չափազանցուած սեղանը, հոգածութիւնը, գուրգուրանքը առիթ չեն տար երեխային, որ ան նախաձեռնէ: Ան կը դառնայ ուրիշէն կախեալ, ուրիշին կարօտ, վարանոտ, ինչ որ զայն կը դժբախտացնէ ապագային:

### ԱՐԴԵՐԻ ԳՊՈՑՆ ԱՆ ԳԵՐ ՈՒՆԻՔ

Մասնագէտներու կարծիքով, դպրոցն ալ շատ կարեւոր դեր կրնայ խաղալ երեխան անկախ, ինքնավստահ եւ նախաձեռնող դարձնելու ընթացքին մէջ:

Այսպէս, կարելի է խմբային աշխատանքներ, քննարկումներ,



մարզական մրցումներ կազմակերպել, եւ փոխի փոխ աշակերտները այդ խումբերուն խմբապետ նշանակել՝ անոնց վստահելով որոշ պատասխանատուութիւններ: Յաճախ խմբապետի պաշտօնները կը վստահուին արթուն, ճարպիկ

եւ համարձակ աշակերտներուն, ինչ որ միշտ ալ մանկավարժական չէ: Առիթ պէտք է տրուի նաեւ ամչկոտ, վարանոտ աշակերտին, որ պէտք չի ունի պատասխանատուութիւն ստանձնել եւ կամայ - կամայ դառնայ ընկերային, նախաձեռնող եւ համարձակ:

Վերագառնալով տան մթնոլորտին, երեխան նուազ չի սիրեր այն մայրը, որ կանուխէն երեխային կը վարժեցնէ առանձին հազնիլ, մահաճակար շտկել, սենեակը կոկել, ուտելէ ետք սեղանը հաւաքել, աղտոտ պնակն ու գաւաթը լուացարանին մէջ դնել, եւ այլն: Ընդհակառակը, իր գաւաթին ապագայով մտահոգ եւ նախանձախնդիր մայրը կանուխէն կը վարժեցնէ փոքրիկին անկախ ըլլալ, իր անմիջական պէտքերը հոգալ եւ անդադար ուրիշին օգնութեան չզրկել:

Հետեւաբար, տան մէջ ծնողը, իսկ դպրոցը՝ ուսուցիչները կարեւոր դեր կրնան խաղալ երեխային անհատականութիւնը զօրացնելու եւ զայն ինքնավստահ ու անկախ դարձնելու ընթացքին մէջ:

### ՅՂԻ ԿԻՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Յղութեան շրջանին կը յայտնուի վարիսը, որ յաճախ ժառանգական է՝ ըստ մասնագէտ բժիշկներու: Վարիսին կ'ընկերանան ցաւ, սրունքներուն մէջ ծանրութիւն, գիշերային քրամփներ, եւ այլն:

Բարեբախտաբար ծննդաբերութեան յաջողորոշ շաքարներուն վարիսը աստիճանաբար կ'անհետանայ, յաջորդ յղութեան կրկին յայտնելու հաւանականութեամբ:

Տօքթ. Յիւլիա Պլանչ-մէզոն 6 խորհուրդ կու տայ վարիսէ տառապող յղի կիներուն՝ նորակային այս խանգարումին հետեւանքները մեղմացնելու համար:

● Առտուն, մահաճակալէն ելլելէ առաջ, կունակին վրայ պառկած, երեւակայական հեծիկ քշեցէ՛ք՝ շուրջ 20 շրջանաձեւ շարժումներ ընելով: Ինչ կը վերաբերի ձեր հագուստներուն, հրաժարեցէ՛ք ձեր արեան շրջագայութիւնը խանգարող նեղ գոտիներէ, գուլպաներէ, մոյկերէ... կօշիկի պարագային նախապատուութիւնը տուէ՛ք 3 - 5 սմ. բարձրութիւն ունեցող կրունկներուն: Վերապէս, հրաժարեցէ՛ք ոտքը - ոտքին վրայ նստելէն:

● Փոխուստ տուէ՛ք տաքէն: Արեւի լոգանքը, տաք ջուրով լոգանքը, ինչպէս նաեւ սրունքին



սափեցէ՛ք երկար ժամանակ ոտքի կանգնելէն: Իսկ եթէ ձեր գործին տեսակը նստակեաց է, կէս ժամը անգամ մը ելէ՛ք ձեր տեղէն, քանի մը քայլ առէ՛ք եւ կրկին նստէ՛ք: Գործի պահուն հրաժարեցէ՛ք ոտքը - ոտքին վրայ նստուածքէն եւ կամ՝ ոտքերը աթոռին տակ խաչածեւելէն:

● Երեկոյան պաղ ջուրով տուշ մը տուէ՛ք ձեր սրունքներուն՝ վարէն դէպի վեր: Ապա զանոնք մարձեցէ՛ք յատուկ սեղանով՝ դարձեալ վարէն դէպի վեր:

● Բնանալու ժամանակ ձեւ մը գտէ՛ք, որ պէտք չի ունենայ կողմը քէշ մը աւելի բարձր դիրք ունենայ՝ արեան շրջագայութիւնը աւելի դիւրացնելու համար:

● Փոխուստ տուէ՛ք տաքէն: Արեւի լոգանքը, տաք ջուրով լոգանքը, ինչպէս նաեւ սրունքին

## «ՊԱՀՈՒԱԾ» ԱՂԸ

Օրական մեր սպասած աղին 70 առ հարիւրը կու գայ «անմեղ» նկատուած ուտելիքներէ: Շուկայէն գնուած ուտելիքները յաճախ անհարկ չեն, որովհետեւ անոնք արդէն արտադրողի կողմէն արդէն գտնուած համար (2,5 կրամ աղը 1 կրամ սոսիսով կը պարունակէ...):



- ԽՕՍՈՒՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ**
- Հացերուն մէջէն ամէնէն աղին նկատուած է պակէրը: Իւրաքանչիւր 100 կրամ կը պարունակէ 1,67 - 2,15 կրամ աղ:
  - Քորն ֆլեքսի պարագային, Քելոկ'զիմ սովորական տեսակը 0,96 կրամ աղ կը պարունակէ իւրաքանչիւր 40 կրամի մէջ:
  - Հանքային - կազային ջուրերն ալ շատ աղ կը պարունակեն, բացի Փերիէէն, որ ամէնէն քիչը աղ կը պարունակէ (0,22 կրամ իւրաքանչիւր լիթրի մէջ):
  - 100 կրամ խոզապուխտը 2 կրամ աղ կը պարունակէ, իսկ նոյն ընտանիքին պատկանող այլ տեսակներ (սալամի...)՝ շատ աւելի:
  - Կաթնեղէններուն մէջ մածունը քիչ մը աղ կը պարունակէ (0,12 կրամ 125 կրամնոց տուփի մը մէջ): Պանիրներէն պէտք է զգուշանայ:
  - Մարկարինը 1 կրամ աղ կը պարունակէ իւրաքանչիւր 250 կրամի մէջ:

Վերջին տարիներուն բժիշկներն ու սննդագէտները ահազանգ հնչեցուցած են՝ ըսելով, թէ շատ աղ կը սպառենք: Անոնց համաձայն, մարդկութեան մէջ կ'արեւոր տոկոսը օրական 11 կրամ աղ կը սպառէ, այսինքն՝ մեր մարմնի պահանջին կրկնապատիկը... Այս չափազանցութիւնը կը պատճառէ գիրութիւն եւ առողջական զանազան հարցեր (արեան զերծընշում, օսթոփորոզի վատթարացում...):

### ԽՈՒՍՈՒՆ

### ՀԱՒՈՒ ՊՈՒՏ՝ ՄԱԾՈՒՆԻ ԹԱՅԱՆՈՎ



- Չորս անձի համար անհրաժեշտ են.
- 4 հաւու պուտ
  - 4 լոլիկ
  - 6 ապուրի դգալ ձիթախղ
  - 1 ապուրի դգալ քիմիոն
  - Պողոննց մը կարմիր փոշի պղպեղ
  - Աղ
  - Թացահին համար՝
  - 8 ապուրի դգալ մածուն (լապնէ)
  - 2 պճեղ սխտոր
  - 4 ապուրի դգալ մանրուած թարմ ուսուտ
  - Աղ
  - Պատրաստութիւն.
  - Խորունկ ամանի մը մէջ դնել 4 ապուրի դգալ ձիթախղ, աւելցնել համեմները, խառնել, ապա խառնուրդով ձեփել հաւու պուտերը եւ 2 ժամ մէջ կողմ ձգել:
  - Փայրեքս ամանի մը մէջ շարել հաւու կտորները, շուրջը շարել երկուքի կիսուած լոլիկները, աղել, մնացեալ ձէթը հաւուն եւ լոլիկին վրայ տարածել եւ 40 վայրկեան եփել փուռին մէջ: Կրակը մարելէ ետք 5 վայրկեան փուռին մէջ ձգել, մինչ այդ պատրաստել թացանը:
  - Մածունը զարնել ճգմուած սխտորին հետ, աւելցնել մանրուած ուսուտ եւ ներկայանալի փոս ամանի մը մէջ հրամցնել հաւուն կողքին:
  - Բարի՛ ախորժակ:

Պատրաստեց՝ ՇՈՒՇԻԿ ՍԱԻՍԱԳԱԼԵԱՆ

### ՊԵՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ...

Ծարուհակուած՝ 6րդ էջէն

- Ճիշդ ձևով օգտագործել իւրաքանչիւր վայրկեան:

- Ժամանակի ճշգրիտ սահմանները ճշդելու համար յատուկ ծրագիր կազմել:

- Յաշակ կերպով ճշդել առաջնահերթութիւնները եւ այն պարտականութիւնները, որոնք յաւելուելով կերպով կարողանանք կրթութիւնը:

- Քննութեան պատրաստութեան ընթացքին մտքով ու մարմնով արթուն ըլլալու համար պէտք է աշակերտը ունենայ ճաշի, հանգիստի եւ զբոսանքի կարճ պահեր, որպէսզի յաւելուելով ճանաչողական տարածուած տեղեկութիւնները ընթացքը չզղանդուի եւ հակառակ ազդեցութիւն չունենայ: Դաս սորվելու համար աշակերտը պէտք է ունենայ լուսավոր, լուռ, օդատեղի եւ ներամփոփ անկիւն մը, որպէսզի ոչինչ խանգարուի եւ հանգիստ նստարանը մը վրայ հանդարտօրէն սեր-

տէ: Կարեւոր է նաեւ օրական ընթացքին սորվելու, որովհետեւ միտքը յաւելի արթուն կ'ըլլայ եւ յաւելուելով արդիւնք կու տայ:

Երբ հասնի քննութեան ներկայանալու ժամը, աշակերտը պէտք է պատրաստ ըլլայ եւ վերջին վայրկեանին իրարու չանցնի. այդ պատճառով անհրաժեշտ է, որ ան նկատի ունենայ հետեւելու կէտերը:

- Քննութեան օրէն առաջ ապահոված ըլլալ թէ՛ կառավարական անհրաժեշտ թուղթերը եւ թէ՛ գրեթե անհրաժեշտ ըլլալ ընէ արթուն չմնայ, որպէսզի բոլոր սորվածները չմոռնայ: Աշակերտը պէտք է հանդարտ եւ երկար քուն մը առնէ՛ յաջորդ օրը աշխուժ եւ հանգիստ ըլլալու համար:

- Քննութեան օրը ո՛չ մէկ փորձ ընէ դաս պատրաստելու կամ յաւելուելու գիտելիքներ ամբարելու, որովհետեւ արդէն ուշ է եւ այդ փորձը կրնայ հակառակ ազդեցութիւն կառնակ ազդեցութիւն

ունենալ:

- Լաւ նախաճաշ կատարէ քննութեան ներկայանալէ առաջ:

- Ինքնավստահ ըլլալ եւ չտատամար իր գիտցածէն կամ սորվածէն:

- Քննութեան պահուն պէտք է:

- Հանգիստ ու հանդարտ ըլլալ:

- Հարցումները լաւապէս կարգաւ եւ հասկնալ, թէ ի՞նչ է պահանջուածը:

- Եթէ կան հարցումներ, որոնք չես գիտեր, մի՛ յուսահատիր, գրէ, ինչ որ գիտես:

- Մի՛ զբաղի շուրջ գտնուողներով եւ մի՛ փորձեր օգնութիւն խնդրել, որովհետեւ անկա միտքը կը ճշդ է եւ կերպով քննութեան պակաս-ընթացքը կրնայ ամբողջ սորվածը:

- Մի՛ փորձեր օրինականացնելները ընել եւ արգիլուած թուղթեր ունենալ հետո, անոնք յաւելուելու մտահոգութիւն եւ սաղտուկ կը պատճառեն:

- Եթէ շուրջը գտնուող աշակերտները ամբողջացուցին իրենց քննութիւնները, իրարու մի՛ անցնի, հանգարտօրէն շարունակէ գրել:

Այս բոլոր տուեալները նկատի առնելով՝ պէտք է քննութիւններուն ներկայանալ պատրաստուած, եւ եթէ նոյնիսկ ամբողջովին պատրաստուած չըլլայ աշակերտը, պէտք է ինքնավստահ ըլլալ եւ փորձէ իր առաջին արգիլները ընել՝ առանց յուսահատելու: Պէտք է քննութեան ներկայացող աշակերտը գիտնայ, թէ ի՞նչ է իր անձին եւ գիտելիքներուն տէր եւ իր յաջողութեան երաշխիքը միայն ինք է:

### ՀԱՅՈՑ ԱԶԱՏԱՄԱՐՏԻ...

Ծարուհակուած՝ 5րդ էջէն

նոր, մեծ դաւադրութիւն՝ պոլիտեխնիկական դաշինքը, որին անգոր եղաւ դիմակայելու հայոց մանուկ հանրապետութիւնը: Եթէ Ռուսինը չկարողացաւ յաղթանակ տանել իր իրաւունքները հայ-թրքական պատերազմից, ապա դրա պատճառը հարաւից եւ հիւսիսից միտքամանակ արշաւող թուրք-ուսական ուժերի ճշգրիտ գերազանցութիւնն էր: Չհաջողուելով Հայաստանի անկախութեան կորստի հետ՝ Ռուսինն անցնում է Զանգեզուր, որտեղից ուշի ուշով հետեւելով հայ համայնապարներին քաղաքաւա քաղաքակառուցութեանը՝ կազմակերպելով հայ համայնապարներին քաղաքաւա քաղաքակառուցութեանը: Բաշգառնեցի Մարտիրոսի, Սասունցի Մուշեղի, Սմբատի եւ այլոց միջոցով կազմակերպելով ֆեոդալական փառապանծ ապստամբութիւնը, որի արդիւնքում փրկուեցին բազում պետական, գիտնորական եւ մտաւորական գործիչներ: Առանց ֆեոդալական ապստամբութեան, հազիւ թէ Հայաստանի մաս ճանաչուէր Զանգեզուրը:

1921ի Մայիսից Ռուսինն արդէն տարագիր էր: Հայրենիքից դուրս նրա ապրած կեանքը (1921՝ Թաւրիզ, 1921-1933՝ Փարիզ, 1933-1942՝ Գահի-րէ, 1942-1944՝ Պաղեստին-1944-1947՝ Պէյրութ, այնուհետեւ մինչեւ մահ՝ Փարիզ) ընթացաւ իր պաշտած ժողովրդի եւ

հայրենիքի շահերից բխող գործունէութեամբ:

Անհնար է լինել լիարժեք հայ քաղաքագետ առանց ծանօթ լինելու Ռուսինի «Հայաստանը միջցամաքային ուղիների վրայ» ուսումնասիրութեանը, ուր ճշգրտօրէն է նախատեսել Հայաստանի տեղի ու դերը անցեալ, ներկայ եւ գալիք աշխարհաքաղաքական գործընթացներում: Անհնար է լինել լիարժեք դաշնակցական՝ առանց իւրացնելու «Հ. Յ. Դաշնակցութեան կազմակերպութիւնը» աշխատութիւնը:

Եւ, վերջապէս, անհնար է գրել հայոց հերոսամարտի խոնավայոյզ պատմութիւնը՝ անտեսելով Ռուսինի «Հայ յեղափոխական մի յիշատակները» անկրկնելի գործը, ուր նա դրսեւորում է որպէս եւ յուշագիր եւ պատմաբան, եւ աշխարհագետ, եւ հոգեբան, եւ վիպասան, եւ պատմաբան:

Իր ազդին եւ հայրենիքին մատուցած վիթխարի ծառայութիւնների համեմատ միշտ համեստ եւ անփառատենչ մնաց Ռուսինը: Թաղումն էլ, իր իսկ ցանկութեամբ, եղաւ շատ համեստ, առանց աւելորդ ճառերի եւ հանդիսութեան: Նիւթեղէնը, որ մնաց նրա ցանկութեամբ այրուած մարմնից, սրբազան մոխիրն էր, որ փորձի տուրփի մէջ գտաւ իր անշուք անկրկն ֆէյր Մուշեղի 3874 թուականատարին՝ 3874 թուականատարի ներքոյ:

### ՍԱԿԱՐԱՆ

Պէյրութի սակարանից մէջ օտար դրամահոյճերու փակման սակագինները հետեւեալներն են:

Սուրիական թղթուկի	31,50 - 33,50
Իրաքեան տիւար	50,00 - 51,00
Պահրէյնեան տիւար	3996,00 - 4000,00
Բուլղարեան տիւար	4953,42 - 4957,42
Յորդանանեան տիւար	2124,42 - 2128,24
Ա.Մ. Էմիրութեան տիւար	408,43 - 412,42
Սեյուտեան տիւար	399,90 - 403,99
Օմանեան տիւար	3900,00 - 3930,00
Ֆարաբեան տիւար	412,15 - 416,15
Եգիպտական կիւն	323,72 - 327,72
Անգլիական սթրլինգ	2232,70 - 2227,11
Չուիցերիական ֆրանք	961,35 - 965,52
Թրքական լիրա	3,62 - 3,64
Կիպրական փաունտ	2447,85 - 2451,17
Ճափոնական հապար եէն	12,07 - 12,11
Ափրիկեան հապար ֆրանք	2450 - 2451
Ամերիկեան տոլար	1501,00 - 1514,00
Քանադական տոլար	974,40 - 978,85
Աւստրալական տոլար	842,85 - 846,70
Եւրո	1424,95 - 1428,16

● ՈՍԿԻ

Անգլիական մէկ ոսկի	115,000 - 125,000
Իրանեան մէկ ոսկի	107,000 - 117,000
Օսմանեան մէկ ոսկի	94,500 - 104,500
Մեքսիկական փէսոս	562,000 - 582,000
Մէկ քիլոկրամ ձուլ ոսկի	15,000,000 - 15,500,000
Մէկ օսն ոսկի	316,68 - 320,72
Մէկ օսն արծաթ	4,81 - 4,85

● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.

Եւրո	0,9555
Քանադական տոլար	1,5419
Չուիցերիական ֆրանք	1,5426
Ճափոնական եէն	123,85
Մէկ սթրլինգ	1,4911

● ՍՈՒԽՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ

ԳԻՆԻ Ա. ՃԶՊՈՎ ԳԻՆԻ Բ. ՃԶՊՈՎ

Ա. կարգի	4 2/8	4 2/8
Բ. կարգի		4 4/8
Բաժնետիր		

### ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Կաթողիկոսարանի բարերարներէն ՃՈՆ ԵՒ ՋՈՒԱՐԹ ԿՈՒՐՃԻ հոգիներուն համար հոգեհանգստեան յատուկ պաշտօն պիտի կատարուի յառաջիկայ Կիրակի, 23 Յունիս 2002ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարին մէջ, յատուկ սուրբ պատարագի:

Կը հրաւիրուին Ճոն եւ Ջուարթ Կուրճ Համալսարանական Հիմնադրամէն կըրթաթոշակ ստացած եւ ստացող Անթիլիան եւ այժմու ուսանողները, ներկայ գտնուելու արարողութեան եւ իրենց արժանի յարգանքը ընծայելու ազնուահոգի եւ կրթանքէր բարերարներուն:

ԳԻՒԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

### ☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

- ☆ **ԽՈՑ** (21 Մարտէն 20 Ապրիլ)
 

Տնտեսական ձեռքարկները պահուելու է այսօր: Գործ մը լաւ ընթացք պիտի ունենայ եւ շահաբեր պիտի ըլլայ: Ուրեմն գոհ պիտի ըլլաք:
- ☆ **ՑՈՒՂ** (21 Ապրիլէն 21 Մայիս)
 

Հանքի մթնոլորտ մը պիտի տիրէ ընտանեկան թե ընկերային ձեռքարկներէ մէջ: Ոչինչի պէտք պիտի ունենանք: Օրը պիտի անցնի խաղաղ:
- ☆ **ԲՈՒՆ** (22 Մայիսէն 21 Յունիս)
 

Աշխատանքի մարզը պիտի ըլլայ գոհունակ: Ձեր կարգ մը գործակիցները պիտի ճանչնանք աւելի լաւ կերպով ու պիտի ափսոսաք, թէ ինչո՞ւ աւելի կանուխ չէք ճանչցած գանձը:
- ☆ **ԽԵՑԳԵՏԻՆ** (22 Յունիսէն 23 Յունիս)
 

Օրը շատ յարմար չէ հանդիպելու ձեր ուզած անձին: Պէտք է խոհեմ ըլլաք, որպէսզի կարելի ըլլայ համբերութեամբ ձեր փափաքին տիրանալ սիրոյ մէջ:
- ☆ **ԱՌԻԻՄ** (24 Յունիսէն 23 Օգոստոս)
 

Կան ծրագիրներ կամ ընելիք գործեր, որոնցմէ հարկ է որ հետո մնաք այսօր, որովհետեւ յարմարութիւն չկայ գանձը իրագործելու: Ուրեմն գորտեղ մի՛ յոգնիք:
- ☆ **ԿՈՅԱ** (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)
 

Ամսուան լուսագոյն օրը է ուսանողներու համար: Ու եթէ կեդրոնական իրենց աշխատանքին վրայ, աւելի լաւ արդիւնքի պիտի հասնին: Ուրեմն՝ գործի:
- ☆ **ԿՇԻՌԻ** (Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)
 

Եթէ ամէն մարդու փոխարէն զուրկ լինաք, կը քանդուի զուրկ ձեռք: Այսպէս առատաճանցութիւնը քիչ մը շատ է. ձեր դրամին արժէքը գիտեք:
- ☆ **ԿԱՐԻՃ** (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)
 

Օրը շատ լաւ է ձեր հետ ձեր «գոյգին» համար: Ամէն մարդ պիտի գովէ ձեզ: Ունիք հետաքրքրական հանդիպումներ եւ լաւ լուրեր:
- ☆ **ԱՂԵՂՆԱՌՈՐ** (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)
 

Ձեր նպատակները եւ լաւ տրամադրութիւնը կ'երբեք արդէն: Բնաւ մի՛ ճշգրէտ ձեռք ձեռք, թէ մարդիկ հասկնաք ձեզ ձեր առողջ կեցուածքը:
- ☆ **ԱՅԵՆԶԱՅԻՐ** (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)
 

Երկար ստեղծ ի վեր մտադրած էք կարեւոր որոշում մը իրագործել: Այսօր պիտի կարեւոր ձեր նպատակին հասնիլ եւ հոգեկան գոհունակութիւն ունենալ:
- ☆ **ԾՈՂԱՆՈՅԵ** (21 Յունուարէն 19 Փետրուար)
 

Օրը յարմար չէ ձեր մտադրած հարցը իրագործելու: Բիչ մը ինքնուրույն եւ «խեղճ» ձեր նպատակը արժէք մը պիտի չունենայ: Ուրեմն լուռ կեցեք:
- ☆ **ՁՈՒԿ** (20 Փետրուարէն 20 Մարտ)
 

Մեծ ծրագիր մը, որ ձեր երազ կը թուէր, այսօր պիտի իրագործուի յաջողութեամբ եւ ձեր ուրախութիւնը պիտի ըլլայ անսահման:

**ՕՐԱՏԵՐ**

**Panasonic**

**ՇԵՌԱՏԵՍԻԼ**

10:00 - Սապահո	12:30 - Միւլիպի հոլ	13:00 - Մարդիկ հասն	14:00 - Եւրոպայի	14:30 - Լուրեր	15:00 - Մշտուար	17:00 - Ֆիլմաշար	18:00 - Արգային	19:30 - Արաւ լուրեր	20:00 - Մտտելիս	21:30 - Տեղական ֆիլմ	22:00 - Տեղական ֆիլմաշար	23:00 - Ամերիկեան ֆիլմաշար																													
6:30 - Ժուրնալ	7:30 - Թելի մարտի	9:30 - Բիլի	10:30 - Բիլի	11:00 - Ռաբոտ	11:30 - Բիլի մէջէլ այլ	12:00 - Է.Մ.Վ.ի սփորթ	12:30 - Է.Մ.Վ.ի Եր	13:00 - Մարիմար	14:00 - Ժուրնալ Ֆրանս 2	14:45 - Մ.Է.Է.ի լուրեր	15:15 - Միւլիպի աղանի	16:30 - Փոքերն	17:00 - Միւլիպի սփորթ	17:45 - Է.Մ.Վ.ի Եր	18:45 - Էնամարտ	20:00 - Մարտիկ լուրեր	20:30 - Է.Մ.Վ.ի Եր	21:30 - Ժամալ	23:15 - Ամսուան սփորթ																						
7:00 - Լուրեր	8:30 - Երկա	9:00 - Այս մայ սապահ	13:00 - Ֆիլմ ինքն	13:05 - Նոթք լինիսիկ	14:00 - Անգլերէն լուրեր	14:20 - Ֆրանսերէն լուրեր	14:40 - Հայերէն լուրեր	15:00 - Լուրեր	15:30 - Արաբական ֆիլմ	16:30 - Թելիպի	17:00 - Երկար ըրպար	17:30 - Արաբական ֆիլմ	18:30 - Օթմոպիլ	19:00 - Սինի մաժալէ	19:30 - Մոնտիալի յատուկ յայտագիր	20:00 - Արաբերէն լուրեր	20:30 - Ռուսուլ	20:35 - Միւլիպի առաջ	21:30 - Պէս սեր	22:30 - Նրա Տաքիթ	23:30 - Ամերիկեան ֆիլմ																				
15:00 - Մոլիպի	15:30 - Արաբական ֆիլմ	16:30 - Թելիպի	17:00 - Երկար ըրպար	17:30 - Արաբական ֆիլմ	18:30 - Օթմոպիլ	19:00 - Սինի մաժալէ	19:30 - Մոնտիալի յատուկ յայտագիր	20:00 - Արաբերէն լուրեր	20:30 - Ռուսուլ	20:35 - Միւլիպի առաջ	21:30 - Պէս սեր	22:30 - Նրա Տաքիթ	23:30 - Ամերիկեան ֆիլմ	15:00 - Հայլուր	15:20 - «Արեւիկ»	16:00 - Հեռուստատեսիայ «Միւլիպի առաջ»	17:00 - Երկար ըրպար	17:20 - Հրաշքահայ կիթ	18:00 - Միւլիպի	18:10 - Միւլիպի ներկան է	18:35 - Նոյն-տուրիկ	19:00 - Հայլուր	20:00 - Բոնէմ	20:35 - Հայերը	21:00 - Ռուսիկոն+	21:40 - Ֆորպոլային հայլուր	22:00 - Հայլուր	23:20 - Հայլուր (ռուսերէն)	23:25 - Հայլուր (անգլերէն)	01:05 - Արգային (դասական երաժշտութիւն)	01:25 - Երկար ըրպար հոլիվուդ ընկալ	01:35 - Ռիթմ եւ պոլկ	01:55 - Նոթաւտ	02:00 - Լուր (երաժշտական նորութիւններ)	02:05 - Երաժշտական ալիք (ուղիղ երթը)	03:00 - Հայլուր	04:00 - «Պալաքոյի Այրիկ»	04:45 - Երկար ըրպար	05:00 - Շրջադարձ	05:50 - Այլուր	
15:00 - Լուրեր	16:00 - Մոլիպի	17:30 - Միւլիպի/35 mm	18:00 - Նո ըրպար	18:15 - Վաւերագրական ժամանակ	19:00 - Լուրեր	20:00 - Միւլիպի սապահիլ	20:30 - Միւլիպի նա ֆիլմ	22:00 - Մասայա	23:00 - Մոնտիալի յատուկ յայտագիր	15:00 - Լուրեր	16:00 - Մոլիպի	17:30 - Միւլիպի/35 mm	18:00 - Նո ըրպար	18:15 - Վաւերագրական ժամանակ	19:00 - Լուրեր	20:00 - Միւլիպի սապահիլ	20:30 - Միւլիպի նա ֆիլմ	22:00 - Մասայա	23:00 - Մոնտիալի յատուկ յայտագիր	15:00 - Լուրեր	16:00 - Մոլիպի	17:30 - Միւլիպի/35 mm	18:00 - Նո ըրպար	18:15 - Վաւերագրական ժամանակ	19:00 - Լուրեր	20:00 - Միւլիպի սապահիլ	20:30 - Միւլիպի նա ֆիլմ	22:00 - Մասայա	23:00 - Մոնտիալի յատուկ յայտագիր												
09:00 - Բիլի	10:30 - Բիլի	11:00 - Ռաբոտ	11:30 - Բիլի մէջէլ այլ	12:00 - Է.Մ.Վ.ի սփորթ	12:30 - Է.Մ.Վ.ի Եր	13:00 - Մարիմար	14:00 - Ժուրնալ Ֆրանս 2	14:45 - Մ.Է.Է.ի լուրեր	15:15 - Միւլիպի աղանի	16:30 - Փոքերն	17:00 - Միւլիպի սփորթ	17:45 - Է.Մ.Վ.ի Եր	18:45 - Էնամարտ	20:00 - Մարտիկ լուրեր	20:30 - Է.Մ.Վ.ի Եր	21:30 - Ժամալ	23:15 - Ամսուան սփորթ	09:00 - Սապահիլ	12:30 - Չուլի	13:00 - Տեղական ֆիլմաշար	14:00 - Լուրեր	15:00 - Վաւերագրական	16:30 - Կեդրական գովաւոր	17:00 - Էն-ֆայլ	18:00 - Մարտիկ լուրեր	19:30 - Լուրեր	20:30 - Երկար ըրպար	21:30 - Ժամալ	22:30 - Էրկար լուրեր	09:00 - Սապահիլ	12:30 - Չուլի	13:00 - Տեղական ֆիլմաշար	14:00 - Լուրեր	15:00 - Վաւերագրական	16:30 - Կեդրական գովաւոր	17:00 - Էն-ֆայլ	18:00 - Մարտիկ լուրեր	19:30 - Լուրեր	20:30 - Երկար ըրպար	21:30 - Ժամալ	22:30 - Էրկար լուրեր
06:00 - Առաջին ծրագիր	07:00 - Հայլուր	08:30 - Մարտիկ	09:00 - Սապահիլ	10:00 - Սապահիլ	11:00 - Սապահիլ	12:00 - Սապահիլ	13:00 - Սապահիլ	14:00 - Սապահիլ	15:00 - Սապահիլ	16:00 - Սապահիլ	17:00 - Սապահիլ	18:00 - Սապահիլ	19:00 - Սապահիլ	20:00 - Սապահիլ	21:00 - Սապահիլ	22:00 - Սապահիլ	23:00 - Սապահիլ	09:00 - Սապահիլ	12:30 - Չուլի	13:00 - Տեղական ֆիլմաշար	14:00 - Լուրեր	15:00 - Վաւերագրական	16:30 - Կեդրական գովաւոր	17:00 - Էն-ֆայլ	18:00 - Մարտիկ լուրեր	19:30 - Լուրեր	20:30 - Երկար ըրպար	21:30 - Ժամալ	22:30 - Էրկար լուրեր	09:00 - Սապահիլ	12:30 - Չուլի	13:00 - Տեղական ֆիլմաշար	14:00 - Լուրեր	15:00 - Վաւերագրական	16:30 - Կեդրական գովաւոր	17:00 - Էն-ֆայլ	18:00 - Մարտիկ				



### ՎՐԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԲՐԻՏԱՆԱՑԻ ՄԸ Կ'ԱՌԵՒԱՆԳՈՒԻ

ԹԻՖՆԻՍ, 19 (ՌՈՅԹԸՐԸ)- Դրամատան բրիտանացի պատասխանատու մը, որ Վրաստանի մէջ կ'աշխատէր, առեւանգուած է Երեւանի շրջան, մայրաքաղաք Թիֆլիսի մէջ:

Ներքին գործոց նախարար Բոպա Նարչեմաշվիլի Զորքազարթի օր մամուլի ասուլիսի մը ընթացքին յայտնած է, որ ոստիկաններ չեն կրցած Փիթեր Շոյի զինեալ 7 առեւանգողները դէպքին ընթացքին պարտութեան մատնել բարձունքին:

Վրաստանի առեւտրական «Ակրոպիզնէսպանք» գործադիր տնօրէն Շօ Վրաստանի մէջ 6 տարուան պաշտօնավարութեան աւարտին կը մօտենար:

Առեւանգումը խիստ նեղ կացութեան մատնած է նախագահ Էտուարտ Շեւարտնածէն, որ կը փորձէ ձեռքազատել երկիրը անօրինութեան դիմագիծէն եւ արեւմտեան ներդրումներ ներգրաւել:

Կոչ ուղղելով ապահովութեան ուժերուն, որ ամէն գնով Շոյի ազատագրումը ապահովեն, ան կառավարութեան մէջ ժողովին ըսած է, որ առեւանգումի այս սովորութեան միայնգամընդմիջտ պէտք է վերջ տրուի:

Դրամատունը, որ հաստատուած է 1999ին Վրաստանի կառավարութեան եւ Եւրոպական Յանձնաժողովին կողմէ, 2003ին պէտք է սեփական մարզին փոխանցուի:

### ԳԵՐՄԱՆԻԱՅԷՆ ԴԻՄՈՒՄ ՍՈՒՐԻՈՑ

ՊԵՐԼԻՆ, 19 (ՌՈՅԹԸՐԸ)- Գերմանիա Սուրիոյ դիմած է, որ կարելիութիւնը տալ կապուելու գերմանացի քաղաքացիի մը հետ, որուն մէջ կան կասկածներ, թէ Մ. Նահանգներու մէջ Սեպտեմբեր 11ին տեղի ունեցած յարձակումներուն հետ կապ ունի եւ որ սուրիական բանտի մը մէջ արգելափակուած է, յայտնած են պաշտօնատարներ Զորքազարթի օր:

Սուրիա չէ հաստատած, որ ենթակա արգելափակուած է, սակայն իշխանութիւնները Երեւանի օր յայտնած են, որ Մարոք ձերբակալած է Մոհամէտ Հայտար Չամմարը, զոր անոնք կը նկարագրեն իբրեւ «Քայիտա» ցանցին բարձրաստիճան մէջ անդամը, եւ վայն յանձնած են Սուրիոյ:

Սուրիացի Չամմար (41 տարեկան) գերմանացի քաղաքացի մըն է, որ նախապէս ապրած է Համբուրկի մէջ, ուր բնակած են նաեւ Սեպտեմբեր 11 իրանականական զորածնողութիւններու ձեռնարկած գլխաւոր չորս օդահետնորդներէն: Կ'ենթադրուի, որ ան աշխատանքի լծած է Մոհամէտ Աթթան, որ յարձակումներուն ձեռնարկած խմբակին պատասխանատուն կը նկատուի:

Գերմանացի պաշտօնատար մը յայտնած է, որ Չամմարի դէմ փաստերը այնքան անբարար են, որ կարելի չէ ձերբակալման միջազգային հրահանգի պահանջել անոր դէմ:

### ԹԵՀՐԱՆ ԵՒ Ե. ՄԻՈՒԹԻՆ

#### ԿԸ ՔՆՆԱՐԿԵՆ ՄԱՐԴԱՅԻՆ

#### ԻՐԱԻԱՆՑ ՀԱՐՅԵՐ

Իրանցի բարձրաստիճան պաշտօնատար մը մարդկային իրանացի մարտիկ հարցեր քննարկեց Եւրոպական Յանձնաժողովին հետ: Երեւոյթ մը, որ ցուցանիչ է կապերու յաւելում բարելաման իրանի եւ Եւրոպական Միութեան հետ:

Արտաքին գործոց փոխ նախարար Ջաւադ Չարիֆ հանդիպում ունեցաւ Ե. Միութեան արտաքին հարցերու յանձնակատար Քրիս Փէթրնի հետ: Հանդիպումին մէջ օր առաջ Ե. Միութեան արտաքին գործոց նախարարները սկզբնական համաձայնութիւն մը գոյացուցած էին տնտեսական ու քաղաքական աւելի սերտ կապեր հաստատելու իրանի հետ: Անոնք սակայն գործակցութիւնը կը պայմանաւորէին մարդկային իրանացի մարտիկ մէջ բարեկարգումներով:

Ե. Միութեան դիւանագետ մը ըսաւ, որ իրանցի պաշտօնատարները կարգ մը առաջարկներ կատարած են, որոնց կարգին է մարդկային իրանացի քննիչներու ու պեկուցաբերներու իրան ալքելութիւնը, որ պէտք է քննարկեն մասնաւոր հարցեր ինչպէս դատական կառուցում ու դատարաններու գործելիքները:

(ՌՈՅԹԸՐԸ)

### ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻՔԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

Շարունակուած 3րդ էջէն

մէ, ըստ թերթին, Ուաշինկթըն յայտարարած է, որ «Քայիտա»-ի մասին Սուրիոյ կողմէ իրեն փոխանցուած տեղեկութիւններ փրկած են ամերիկացիներու կեանքը եւ կը սպասուի, որ Սուրիա գործակցի նաեւ Հնդկաստանի հարցով: «Լիոն» գրած է, թէ Միութեան Արաբիա ձերբակալած է «Քայիտա»-ի 7 անդամներ, որոնք հակամերիկեան յարձակումներու կը պատաստուէին: «Պայթաք» նշած է, թէ շէյխ Հասան Նասրալլա յայտարարած է, որ Իսրայէլ այսօր կը դիմագրաւէ իր պատմութեան մէջ աննախընթաց անելի վիճակ մը: «Մուսթաֆայա» գրած է, թէ իսրայէլեան բանակը զօրաշարժի կ'ենթարկուի Լիբանանի հետ իր սահմանին վրայ: Միջազգային կեանքին անդրադառնալով՝ թերթերը գրած են, թէ Հիւսնի Մուսարաֆ այսօր Աման եւ Դամասկոս պիտի այցելէ: Ըստ անոնց, 40 տարիէ ի վեր առաջին անգամ ըլլալով սուրիական բանակի սպայակոյտի պետը Թուրքիա կ'այցելէ: «Ճորձ Պուշի եւ Թունի Պլեյրի տիկինները, ինչպէս նաեւ Մի. Էն. Էն.»-ի կայանի հիմնադիր Թէյմ թըրըր քննադատեցին իսրայէլեան քաղաքականութիւնը», նշած են թերթերը:

### «ԱՄԵՐԻԿԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԱՊՈՒՇ ՔԱՂԱՔԱՎԱՆՈՒԹԻՒՆԸ ԶԻ ՎԱՍՑՆԵՐ ԻՐԱԲՆ ՈՒ ԻՐԱՔՅԻՆԵՐԸ»

ԿԸ ԳՐԵ «ՔԱՏԻՍԻԱ»

ՊԱՂՏՍՏ, 19 (ՌՈՅԹԸՐԸ)- Իրաքեան «Քատիսիա» օրաթերթը յայտնեց, որ Պաղտատ չի վախնար ամերիկեան լրատուական աղբիւրներու հրապարակած լուրերէն, ըստ որոնց Միացեալ Նահանգներու նախագահ Ճորձ Պուշ Մի. Այ. Էյ.ին հրահանգած է տապալել Սաւտամ Հիւսէյնը: «Քատիսիա» կը գրէր, որ այսպիսի ապուշ քաղաքականութիւն, որով կը յատկանշուին ամերիկեան իշխանութիւնները չի վախցնէր Իրաքն ու իրաքցիները:

Օրաթերթին խմբագրական յօդուածը կը նշէր նաեւ, որ տասնամեակէ մը ի վեր ամերիկեան կառավարութիւնները Իրաքի դէմ ամէն ձեռք յարձակումի ձեռնարկեցին, սակայն բացի ճախողութենէն ու պարտութենէն ոչինչ նուաճեցին:

«Քատիսիա» կոչ ուղղեց ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անանի եւ Ապահովութեան խորհուրդի անդամներուն դատապարտելու ամերիկեան իշխանութիւններուն յարձակողական քաղաքականութիւնը Իրաքի դէմ:

«Ուաշինկթըն Փոսթ» քանի մը օր առաջ գրած էր, որ Պուշ հրահանգիր մը ստորագրած է, Մի. Այ. Էյ.ին ուղղուած, պահանջելով, որ ծածուկ ծրագիրներ մշակուին ու գործողութեան դրուին տապալելու համար Սաւտամը:

Միւս կողմէ, Միացեալ Նահանգներ իրաքցի դիւանագետէ մը վերստին պահանջեցին, որ Նիւ Եորքէն հեռանայ մինչեւ այս անուն վերջը: Արտաքին գործոց նախարարութիւնը նամակ մը ուղարկած էր պահանջելով, որ ՄԱԿի մէջ իրաքեան պատուիրակութեան անդամ Ապտէլուահման Սաւտամը քաղաքականութեան լրտեսութեան յանցանքով եւ պէտք է երկիրէն հեռանայ: Ուաշինկթըն մանրամասնութիւններ չփոխանցեց յանցանքին մասին, հակառակ անոր, որ Պաղտատ քաղաքացիութիւն պահանջած էր:

Դէտեր կը նախատեսեն, որ Իրաք ենթարկուի պահանջին՝ տուն կանչելով Սաւտամը:

### ՊՈՒՇ ԿԸՆԴԴԻՄԱՆԱՅ ՄԱԿԻ ՆՃՐԱԴԱՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՈՐ ԱՏԵԱՆԻՆ

ՄԱԿ, 19 (ՌՈՅԹԸՐԸ)- Միացեալ Նահանգներ Զորքազարթի օր հրապարակած են ՄԱԿի Ապահովութեան խորհուրդի մէջ բանաձեւին նախագիծը, որ ՄԱԿի խաղաղարար գործողութիւնները Ոճրադատ Միջազգային նոր առեւանքի հաստատութենէն դուրս մնան:

Նախագահ Ճորձ Պուշի վարչակարգը եւ Քոնկրէսի մէջ պահպանողական հանրապետականները բացարձակապէս կ'ընդդիմանան առեւանքի՝ վայն ամերիկեան գերիշխանութեան սպառնալիք մը նկատելով:

Անոնք ունին այն մտավախութիւնը, թէ արտասահմանի մէջ ամերիկացի պաշտօնատարներ, ինչպէս նաեւ վիսուրներ կրնան քաղաքական հետապնդումներու առարկայ դառնալ: Նման քայլեր ամբողջովին անհասանալի կը նկատուին առեւանքի զօրակազմ կանգնողներուն կողմէ:

Բանաձեւին նախագիծը կը պահանջէ, որ ռճիրներու շուրջ քննութիւններ եւ դատական հետաքրքրումներ տեղի ունենան այն երկիրներուն կողմէ, որոնք քաղաքացի են վանտիք գործած անձերը՝ խաղաղարար առարկայութեան մը ընթացքին:

Կը նախատեսուի, որ բանաձեւը ուժգին ընդդիմութեան առարկայ դառնայ 15 անդամ հաշուող Ապահովութեան խորհուրդին կողմէ:

### ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ «ՄԻԱԿ ԵՐԿԻՆՔ» ԵՐԱԳԻՐԻՆ ԴԵՄ ԳՈՐԾԱԴՈՒՄ

ՓԱՐԻՉ, 19 (ՌՈՅԹԸՐԸ)- Եւրոպայի տարածքին ճամբորդներ թռիչքներու քառասուն վիճակ դիմագրուած են Զորքազարթի օր, ֆրանսական օդային երթուղիի հսկողութեան պաշտօնէաններու գլխաւորութեամբ գործադրուի մը պատճառով՝ եւրոպական օդային միացեալ տարածքի մը ծրագիրներուն դէմ:

Օդանաւային ընկերութիւնները դէպի Ֆրանսա եւ անկէ դուրս թռիչքներուն մեծամասնութիւնը ջնջած են՝ Եւրոպական Միութեան «միակ երկինք» ծրագրին դէմ գործադրուին պատճառով:

Այդ ծրագիրին նպատակն է ներդաշնակել թռիչք չափանիշները եւ ստեղծել թռիչքներու անցքեր, որոնք պիտի անցնին ցամաքամասին անհետացող ցամաքային սահմաններէն:

Գործադրուին մասնակցած են ֆրանսացիներուն յոյն, իտալացի եւ հունգարացի պաշտօնակիցները: Արձակուրդի մեկտող հարիւրաւոր ճամբորդներ Երեւանի գիշեր Յունաստանի մէջ օդակայաններու մէջ անշարժացած են, գործադրուին պատճառով:

## ՊՈՒՇ «ԿԱՆԱՉ ԼՈՅՍ» ԿՈՒ ՏԱՅ...

Շարունակուած 2րդ էջէն

սօրուն կամ վաղուան:

Շարունի ապահովութեան հարցերու կառավարութիւնը որոշեց նաեւ վիսուրական գործողութիւններու ձեռնարկել պաղտատին եւ կրճատելու իշխանութեան, ծայրայեղական կապուակերպութիւններու եւ ռեւել մէկու մը դէմ, որ կ'առնչուի անոնց:

Պաղտատինեան իշխանութեան տեղեկատուութեան նախարար Եասէր Ապտ Ռապաֆ ըսաւ, որ Իսրայէլի որոշումները ցոյց կու տան, թէ անոր նպատակն է կործանել պաղտատինեան իշխանութիւնը: Ան անկցուց, որ Իսրայէլի ահաբեկչութիւնը կ'ուզէ իբրեւ պատրուակ օգտագործել՝ արդարացնելու համար յարձակողական քաղաքականութիւնը պաղտատինցի ժողովուրդին դէմ, ինչպէս նաեւ՝ արգիլելու համար պաղտատինեան անկախ պետութեան ստեղծումը:

Պաղտատինցի այլ նախարար մը՝ Սաէպ Ուրայքաթ ըսաւ, որ Շարուն կը փորձէ ճախողութեան մատնել միջազգային որեւէ ճիգ, որուն նպատակն է վերականգնել խաղաղութեան գործընթացն ու բանակցութիւնները: Ուրայքաթ դիտել տուաւ, որ նոյնիսկ Պուշի խաղաղարար ձգտելը կ'ուզէ լիծեցնել Իսրայէլի վարչապետը:

Եասէր Արաֆաթի խորհրդատուներէն՝ Ահմէտ Ապտէլուահման դատապարտեց պաղտատինեան ինքնավար շրջանները վերստին գրաւելու Իսրայէլի որոշումը, որ պաղտատինցի ժողովուրդը պիտի հրաւիրէ ամէն ձեռք ընդդիմութեան դիմելու իրենց պետութեան ու անոր ուժերուն դէմ:

Իսրայէլի պաշտպանութեան նախարարութեան աղբիւրները երէկ հաղորդեցին, որ Այսրոյորդանանի հետ սահմանին վրայ ապահովութեան պարիսպի մը շինութիւնը, որ սկսած էր անցել շաբաթավերջին, պիտի արագացուի:

Իսրայէլեան քաղաքական աղբիւրներ յայտնեցին, որ պաղտատինեան որեւէ նոր յարձակումի դիմաց՝ իսրայէլեան ուժերը պիտի ներխուժեն պաղտատինեան ինքնավար շրջանները՝ վերագրաւելով վանտիք, երկար առեւ հոն մնալու համար: Իսրայէլեան բանակը յաճախ պաղտատինեան շրջանները կը ներխուժէ, սակայն կարճ ժամանակ մը ետք կը հեռանայ: Այս անգամ սակայն, որոշումն ու քաղաքականութիւնը փոխուած են: Բանակը երէկ ժեհնի մտաւ՝ հետը բերելով շարժական բնակարաններ, որս հաստատեց քաղաքին վրայ: Ժեհնիի բնակիչները մտահոգ են կը իսրայէլեան ուժերը շարժուին քաղաքը:

Իսրայէլեան քաղաքականութեան իրենց կարգին պարզապէս յայտնած են, որ ժամանակաւոր լուծումներու ծրագիրներ կը մշակուին:

●ՍՈՒՄՖ մը պաղտատինցի մտաւորականներ կոչ ուղղեցին վերջ տալու իսրայէլացի քաղաքայիններուն դէմ յարձակումներուն, որով հետեւ անոնք կ'արգելակեն անկախ պետութեան հաստատումը:

(ՌՈՅԹԸՐԸ)



# Gooodall !!



Buy a 43", 50" or 61" Toshiba Projection TV and get either a DVD player or a 21" TV for FREE\*.

## Free\*

DVD or 21" TV \* till June 30th



ԱՂԱՍԱՐԳԻՍԵԱՆ ՇԱՍ. Պորճ Շաւառ - Բաղաքապետարանի կրապարակ ՇՏՈՒԱԶՍԷՆ 01-241000 Բ. մասնաձևը.- Home Marketի մէջ, Մթայեղի վերջապատութեան, Պրիճայայի ճակղուն վրայ:

# TOSHIBA